№ 283 ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 1902 ԿԻՐԱԿԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 № 283

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը յայտնում է, որ կիրակի, դեկտեմբերի 22 ին,

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

մահվան տասնամեակի առիթով, Խոջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը մատուցվի պատարագ, ապա գերեզմանի վրա կը կատարվի հոգեհանգիստը և կը բացվի մահարձանը։ Պատարագը կը սկսվի առաւօտեան ժամի 10-ին, իսկ հոգեհանգիստը ճիշտ 12-ին։

Թիֆլիսի քաղաքային արհեստաւորաց դպրոցի բարձր դասարանների հայ աշակերտների կողմից, նրանց ուսուցիչ հայ Արսէն աւ. ք. Բագրատունին, ամսիս 23-ին, երկուշաբթի օրը, վաղաժամ վախճանված՝

ՎԱՀԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

մահվան առիթով, Կուսանաց եկեղեցում՝ կատարվելու է հոգեհանգստեան պաշտամունքը, սուրբ պատարագից յետոյ 12 ժամին օրվայ։ Խնդրվում է հանգուցեալի յիշատակը յարգողների ներկայութիւնը։ 1—1

Կիրակի, ամսիս 22-ին, Վանքի մայր եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ Մօսկվայում անժամանակ վախճանված

ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ ՓԱՄՇԱՐԵԱՆԻ

համար։ Ս. պատարագը կը սկսվի 10½ ժամին, իսկ հոգեհանգիստը 12½-ին։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մահարձանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մենաւոր ժայռը. Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԾԱՆՈՒՑԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տասը տարի առաջ։

ՄԱՀԱՐՁԱՆԸ

Այսօր, կիրակի, դեկտեմբերի 22-ին, «Մշակի» հիմնադիր Գրիգոր Արծրունու գերեզմանի վրա, նրա մահվան տասնամեակի լրանալու առիթով, կը կատարվի հոգեհանգիստ։

Գերեզմանի վրա դրված է մահարձան, որ պատրաստվել է նկարիչ Գ. Բաշինջաղեանի անմիջական ցուցումներով քանդակագործ Անդրէօլետտիի արհեստանոցում։ Մահարձանը հասարակ է, բայց տպաւորիչ և նշանակալից։

Այդ մահարձանը ցոյց է տալիս, որ Գրիգոր Արծրունին փորձեց մշակութեան ենթարկել և յղկել մեզ ժառանգութիւն մնացած ժողովրդական կեանքի աւանդական ապառաժը և յայտնագործեց, որ ժայռի մէջ պարունակվում է պիտանի և գեղեցիկ մարմարիոն։ Յետնորդները պէտք է շարունակեն նոյն մշակութեան և յղկման գործը ապագայում։

Ցանկանալով գաղափար տալ մեր ընթերցողներին մահարձանի մասին, մենք մեր բաժանորդներին ուղարկելու համար պատրաստել տուինք յատուկ պօստ-կարտ, որի վրա նկարված են մի կողմից Գրիգոր Արծրունին և «Մշակը», իսկ միւս կողմից կանգնեցրած մահարձանը։ Գրիգոր Արծրունուն կապում է մահարձանի հետ ժապաւէն, որի վրա դրված է լատինական տասը (X) տառը, իբրև նշան Արծրունու մահվան տասնամեակի լրացման, իսկ «Մշակի» կողքին նշանակված է XXX թիւը, իբրև նշան լրագրի գոյութեան երեսնամեակի։

Մահարձանը, որ մինչև այժմ քօղածածկ էր, կը բացվի հոգեհանգստի ժամանակ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Տխուր յիշատակներով լիքն էր այս շաբաթը։ Նա բերեց դեկտեմբերի 19-ը, Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակը։ Յիշեցինք այդ տարեդարձը, յիշեցինք տասը տարով մեզանից հեռացած անցեալը։ Իսկ այսօր բաց ենք անում մահարձանը նրա գերեզմանի վրա։ Համեստ է այդ յուշարձանը, բայց բաւական է ապագայ սերունդի համար։ Նա, այդ մարմարեայ ժայռի կտորը, չը պիտի պատմէ ապագային, թէ ով էր այն մարդը, որի անունն ու ազգանունը ոսկէ տառերով քանդակված են իր վրա։

Ո՛չ, պատմողը պիտի լինի այս աշխարհում նրա թողած երեսնամեայ գործը։ Շատ բան է ասվել այդ գործի մասին, բայց դեռ անհամեմատ աւելի շատ բան պիտի ասվի։ Լաւագոյն ասելիքը, արդար, ճշմարիտ, խոշոր ասելիքը ապագային է պատկանում։ Դեռ ընդ ամենը տասը տարի է անցել այն օրից, երբ նա հեռացաւ մեզանից։ Հասարակական կեանքի համար մի շատ չնչին ժամանակամիջոց է տասը տարին։ Բայց այսօր նա էլ շատ բաւական է մեզ համար, որպէս զի զգանք, թէ որքան մեծ էր մեր կորուստը։ Յաւիտենական լռութեան այդ մի փոքրիկ կտորը, որ չափվում է տասը տարի հասկացողութեամբ, արդէն բաւական է մեզ հասկացնելու համար, թէ այսօր բացվող մարմարեայ ժայռի տակ թաղվածը մի հսկայ ոյժ էր մեզանում, մի հերոս, որի նմանը շատ քիչ են ծնում հայ մայրերը։

Կանցնի ժամանակ, կանցնեն տասնամեակներ, և այդ հերոսի պատկերը աւելի և աւելի կը խոշորանայ, նրա կատարած գործը աւելի և աւելի մեծ փայլ կը ստանայ։ Պատմութիւնը ուշ է մտնում իր դերի մէջ,—այդպէս էլ հարկաւոր է, որպէս զի նա լինի իսկական պատմութիւն։ Բայց որքան էլ ուշ նա կը կատարէ իր մեծ պաշտօնը հերոսների վերաբերմամբ...

Մեծերը, հերոսներն են արժանանում պատմութեան էջերին։ Բայց դա չէ նշանակում, թէ մենք, փոքրիկ մարդիկս, հասարակ մահկանացուներս, պիտի յուսահատվենք, պիտի ձեռք վերցնենք ամէն մի գործունէութիւնից։ Ո՛չ, մեզանից ամէն մէկը պիտի աշխատէ մի բարի գործ, մի ազնիւ յիշատակ թողնել։ Ինքը, Արծրունին, սկսելով իր հսկայական գործը, չէր էլ մտածում իր անունը անմահացնելու մասին։ «Ի՞նչ վնաս, թող յայտնի չը լինեն ապագայ սերունդներին մեր անունները,—ասում էր նա։—Մեզ բաւական է, թէ մեր աշխատած գործը օգուտ կը բերէ մարդկութեանը։ Թող կորչէ անունը—բարի գործը չի կորչի»։

Ահա ինչ պիտի լինենք ամենքս։ Խոշոր տաղանդը, հերոսական մեծագործութիւնը չատ քչերին է տալիս բնութիւնը։ Բայց նոյն բնութիւնը տուել է բոլոր մարդկանց աշխատելու, մի որևէ օգտակար գործ կատարելու կարողութիւնը։ Դա ընդհանուր պարտաւորութիւն է, և ոչ ոք չէ կարող ասել, թէ գնահատելին, փառաբանութեանց արժանին միմիայն խոշոր տաղանդի, հերոսի գործն է։ Ո՛չ այդ տաղանդի, այդ հերոսի գործը մարդկութեան փառքն ու պարծանքը կը կազմէ. բայց աշխարհը անապատ կը լինէր, եթէ միայն տաղանդների ու հանճարների սպասէր, եթէ չը լինէին համեստ, փոքրիկ, բայց տոկուն ու պարտաճանաչ աշխատաւորները, այն անթիւ բանուորները, որոնք գործում են մարդկութեան համար, բայց անուն չեն թողնում, անյայտ ու անյիշատակ են մնում։

Մոռնանալ այդ աշխատաւորներին։—Երբէք։ Ինքը, Արծրունին գրում էր իր մի յօդուածի մէջ. «Ամօթ է այն ժողովրդին, որ հանճարներ ունի»։ Ինչո՞ւ։—Որովհետև այդ հանճարները, ասում էր նա, ապագայ են, որ ամբոխը անբնական դրութեան մէջ է, որ նա սաստիկ տգէտ է, որ ժողովուրդը դեռ լուսաւորութեան չէ հասել, ուստի և բարոյական զգացմունքի ու գիտութեան բեռը չալակված պիտի լինի մի անհատի ուսերի վրա։

Սա, ի հարկէ, չէ նշանակում, թէ հանճարները հարկաւոր չեն։ Ոչ, նրանք հարկաւոր են, քանի որ ժողովուրդը տգիտութեան մէջ է։ Այստեղից ահա երևում է, որ մի ազգի համար բնական, օրինաւոր, արդարացի կը լինի այն դրութիւնը, երբ նա պատրաստված կը լինի միահամուռ ոյժերով առաջ գնալու, երբ բարոյականութեան և գիտութեան սկզբունքները միայն անհատներին չեն յայտնի լինի ու չեն հեռացնի նրանց, այլ ամբողջ հասարակութեան սեփականութիւնը կը դառնան, ամէն մէկի և ամենքի համար սովորական, մարմնացած պարտաւորութիւն կը լինեն։

Եւ Արծրունին իր կեանքի ընթացքում արտակարգ տաղանդներ, հերոսական մեծագործութիւններ չէր որոնում հայերի մէջ։ Նրան անկեղծ կերպով ուրախացնում, ոգևորում էր իւրաքանչիւր բարեխիղճ, եռանդոտ աշխատաւոր։ Մեծ անուններ չէր որոնում նա, ոչ էլ հեղինակութիւն վաստակող գործիչներ։ Երիտասարդական ազնիւ սրտերը, որոնք փառքի, տիտղոսների, հարստութեան ետևից չեն վազում, այլ հասարակաց գործն են իրանց գոյութեան նպատակ դարձնում—ահա նրա ամբողջ յոյսը։ Մեծ էր, անսահման էր նրա հաւատը այդ տեսակ երիտասարդութեան վրա։ Նա գուրգուրում, փայփայում էր ամէն մի անյայտ երիտասարդի, որ կարողանում էր ցոյց տալ, թէ ինքը մի նորաբողբոջ ոյժ է, ընդունակութիւն ունի մտցնելու իր հայրենի հասարակութեան մէջ որևէ բարի գործի սկզբունքը, գաղափարի սերմերը։ Թող կորչէ անունը, ինչ վնաս, բարի գործը չի կորչի։ Ով այսպէս էր հասկանում իր մարդկային կոչումը՝ նա Արծրունու բարեկամն էր։

Եւ ճակատագրին հաճելի էր եղել, որ հէնց այն ժամանակ, երբ բոլորում էր նրա գերեզմանի տասնամեակը, գերեզման իջնէ այդպիսի երիտասարդներից մէկը, մէկը այն նորածիլ ոյժերից, որոնք նրա յիշատակն ու գաղափարներն են պաշտում։

Դա Վահան Նալբանդեանն է։ Նոյն այն օրը, երբ «Մշակը» պիտի նուիրվէր իր հերոս հիմնադրի յիշատակին, նոյն դեկտեմբերի 19-ին, մենք վշտից դողացող ձեռքով արձանագրում էինք, որ մեռաւ մեր ամենքիս սիրելի բարեկամ Նալբանդեանը։

Այդ 26-ամեայ ծաղիկի հետ, որ թառամեց Վաղարշապատի անհիւրասէր մթնոլորտում, ես ծանօթ էի դեռ այն ժամանակ, երբ նա ուսանող էր Գերմանիայում։ Մի ամառ նա եկել էր Թիֆլիս, և մենք յաճախ հանդիպում էինք իրար։ Տպաւորութիւնը, որ ես ստացայ նրանից, վերին աստիճանի գեղեցիկ էր։ Հայաստանցի նահապետական ընտանիքի զաւակ, նա մնացել էր մաքուր, անարատ, թէև Եւրոպայի մի մեծ կենտրոնում էր ապրում։ Համեստ ու ամօթխած էր, իբրև գիւղական հարս։ Նրա հետ կարելի էր խօսել միայն ուսման, գրականութեան, հասարակական հարցերի մասին։ Այդ շրջաններում նա մի անխոնջ, հետաքրքրական, ուշադիր խօսակից էր։

Հայկական սարսափների ժամանակ Նալբանդեանը անդադար թղթակցութիւններ էր ուղարկում «Մշակին», որոնց մէջ գլխաւորապէս գերմանական մամուլի հայեացքների մասին էր խօսում։ Երբէք նա այդ թղթակցութիւնները իր իսկական անունով չէր ստորագրում։ Վանը նրա դժբախտ հայրենիքն էր, և նա հասկանալի ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ հետևում էր, թէ ինչ է ուզում անել ուժեղ, քրիստոնեայ Եւրոպան՝ դժոխքի մէջ այրվող մի բուռն խեղճ ժողովրդի համար։ Մենք միշտ մի առանձին հետաքրքրութեամբ էինք բաց անում Նալբանդեանի նամակները, իմանալով, որ նա մեզ էլ անչափ հետաքրքրող նորութիւններ է հաղորդում։ Եւ նա միշտ վառ էր պահում մեր այդ հետաքրքրութիւնը։

Անցան սարսափի ժամանակները։ Եւրոպան ոչինչ չարաւ, Վանը և նրա նման ուրիշ շատ դժբախտներ ծածկվեցան ամայութեան քօղով։ Նալբանդեանը, կարծես յոյսը կտրած իր հայրենիքից, նուիրվեց գիտութեան և այնուհետև ուղարկում էր մեզ լուրջ, ծանր, խելացի յօդուածներ։ Իսկ երբ 1901-ի ամառը, վերջացնելով ուսումը, եկաւ Թիֆլիս, ես տեսայ նոյն համեստ ու ամօթխած գիւղական հարսին։ Այժմ նա, ի հարկէ, այն չէր, ինչ տարիներ առաջ, երբ նա դեռ ուսանող էր։ Այժմ նա պատրաստված, լաւ կրթված, բազմակողմանի զարգացած մարդ էր։ Բայց գիտութիւնը նրան չէր փոխել. դա գերմանական ուսանողի մի իդէալական տիպն էր։

Մի ամբողջ տարի միասին ենք եղել, օր չէր լինում, որ մենք չը տեսնվէինք «Մշակի» խմբագրատանը։ Երեկոները, երբ վերջանում էր օրվայ աշխատանքը, նա գալիս էր, մենք նստում էինք, խօսում, երկար խօսում։ Նա գեղեցիկ կերպով ծանօթ էր եւրոպական գրականութեան հետ, շատ լաւ ճանաչում էր և մեր գրականութիւնը։ Հասկանալի է, թէ որքան գրաւիչ, հետաքրքրական կը լինէին մեր խօսակցութիւնները։ Իր մանկամտութեամբ նա ներկայացնում էր համալսարանական գիտութեան վերջին խօսքը պատմութեան և գրականութեան մասին։ Մեծ հաճոյքով մտքեր էինք փոխանակում իրար հետ, և նա միշտ զուարթ ու առոյգ էր։

Իմ այս երկար ծանօթութեան ժամանակ ես շատ առիթներ ունեցայ հանգուցեալի բնաւորութեան մի քանի թանգագին գծերը ճանաչելու։ Մի սիրուն բացառութիւն էր նա կազմում մեր ժամանակակից երիտասարդութեան մէջ։ Զտեսներից չէր նա, այն ինքնահաւան ամբարտաւաններից, որոնք կարծում են, թէ ուսանողական նստարանի վրա ամէն ինչ ձեռք են բերել, և այժմ, կեանքի մէջ մտնելուն պէս, հէնց առաջին քայլերից, մնում է, որ պատգամներ կարդան, ահագին հարցեր լուծեն

գրչի հարուածով, պահանջեն, որ իրանց ճանաչեն մի անմերձենալի վեհութիւն, մի անսխալական հեղինակութիւն։ Վահան Նալբանդեանը չափազանց հասկաց ու լուրջ էր. ինքնագովութիւն, մեծամտութիւն չը կար նրա մէջ։ Նա շատ լաւ հասկանում էր, որ պէտք է սովորել, միշտ, անդադար սովորել, որ դատարկ աղմուկ հանելով բան չի դառնայ, որ մեզ հարկաւոր են աշխատաւորներ և ոչ թէ առաջին իսկ քայլից անմահութեան թեկնածու գրվողներ։

Հայ նահապետական ընտանիքը, գերմանական ուսումնականութեան համեստութիւնը, պարզութիւնը նրա մէջ դրել էին ապագայ ազնիւ, չարքաշ աշխատաւորի բոլոր յատկութիւնները։ Պէտք էր տեսնել, թէ որպիսի սրբատաշարժ ակնածութեամբ և հիացմունքով էր խօսում նա նշանաւոր պրոֆէսորների, աշխարհահռչակ հեղինակութիւնների մասին։ Միշտ այդ մասին, շատ քիչ, համարեա ոչինչ իր մասին։ Դոկտորական աստիճանը չէր կուրացնում նրան, չէր մոռացնել տալիս որ, այնու ամենայնիւ, կեանքի մէջ նոր մտած մի սկսնակ է ինքը։ Աշխատում էր մեծ զարեխղճութեամբ. մի փոքրիկ հարցն էլ ուսումնասիրում էր խնամքով և երբէք չէր շտապում առանց լաւ տեղեկանալու, առանց հիմնաւոր կերպով ըմբռնելու՝ մի բան ասել։

Ժամանակակից երիտասարդութեան մէջ աչքի ընկնող հազուագիւտներից մէկն էր Նալբանդեանը և իբրև հայ գրող։ Նա շատ գեղեցիկ գիտէր հայերէնը և այն դաւանանքն ունէր, որ հայ երիտասարդները հայոց գրականութեան մէջ պիտի աշխատեն։ Որպիսի օրինակ այն պարոնների համար, որոնք կարծում են, թէ կարելի է հայ լինել առանց հայերէն իմանալու։ Այդպիսի՛ների թիւը շատ է մեզանում, որքան շատ...

Ահա այս բոլոր յատկութիւնները շատ լաւ ցոյց են տալիս, որ Վահան Նալբանդեանը լաւ պատրաստված էր մեզանում գործելու։ Մենք, հայ գրագէտներս, շատ և շատ առիթներ ունենք պասսիմիստական խոհերի ենթարկվելու։ Տարիներ են անցնում, իսկ հայ գրագէտների թիւը չէ աւելանում. ամեն տարի հայ ուսանողներ են վերջացնում, բայց նրանց բազմութիւնը անցնում է մեր գրականութեան մօտով, խրվում, անյայտանում է կեանքի ինչ-որ անյայտ խորշերում։ Նոր մարդիկ չեն գալիս, այնպիսի մարդիկ, որոնք տիրապետեն իրանց մայրենի լեզուն, յօժարութիւն ունենան իրանց ժողովրդի մտաւոր շահերին նուիրվելու։ Եւ ահա այսպիսի անապատի մէջ շատերիս ուրախութիւն պատճառեց Վահան Նալբանդեանը, երբ եկաւ արտասահմանից։ Գոնէ մէկն աւելացաւ, ասում էինք մենք ուրախութեամբ։

Չը գիտէինք, որ այդ մէկը մի տարուց յետոյ պիտի մտնէ գերեզման...

Առաջին տարին նա գրում էր թատրօնական բեցէնզիաներ, գրական-քննադատական յօդուածներ։ Շատ անգամ ես հարցրել եմ նրանից. իսկ հայոց պատմութիւնը։ Չէ՞ որ մենք պատմութիւն չունենք, իսկ նա մասնագէտ է, նա ամեն յարմարութիւններն ունի մեզանում գոնէ առաջին քայլը անելու։

Եւ նա ինձ ասում էր, թէ իր միտքն էլ հէնց այդ էր—կազմել հայոց պատմութիւն։ Դա, ճիշտ որ, մի սուրբ գաղափար էր նրա համար. մի գաղափար, որ դեռ հեռու էր իրագործումից։ Մի տասը տարի էր հարկաւոր պատրաստվելու համար։ Եւ նա էջմիածին գնաց՝ պատմական աղբիւրների ուսումնասիրութիւնը սկսելու համար։ Մենք յաճախ վերադառնում էինք այդ հարցին։ Գաղափարը յափշտակել էր նրան վաղուց. գրել հայոց պատմութիւն ժամանակակից գիտութեան պահանջների համաձայն, գրել այն, ինչ մինչև այժմ ոչ ոք չէ գրել—մի մեծագործութիւն էր դա, որ ոգևորում էր համակրելի, համեստ երիտասարդին։ Եւ նայելով նրա ծաղիկ հասակին, լսելով նրա յուսաւոր, առաջադէմ հայեացքները՝ ինձ թըւում էր թէ նա շատ լաւ կարող կը լինի գլուխ բերել այդ շատ կարևոր գործը։

Խեղճ Նալբանդեան...

Կեանքի բարդ հարցերը, հոգեկան յուզմունքները, մտքերը, պատրաստութիւնները, հաւատն ու յոյսը ինչպէս անակնկալ կերպով թաղվում են նեղ ու խոնաւ այն փոսի մէջ, որի անունն է գերեզման...

Ցաւալի է այդ գերեզմանը։ Ցաւալի է, երբ նոր սկսվող գործունէութիւնը յանկարծ դառնում է յաւիտեան լուռ ու ցուրտ մի հողաբլուր։ Ցաւալի է, երբ երիտասարդը երկար տարիների հոգեմաշ աշխատանքով ձեռք է բերում գիտութիւն, կրթում է իրան հասարակաց բարիքի համար, որպէս զի հէնց առաջին քայլից գլորվի գերեզմանի խորքը...

Այդ ցաւը, ընթերցող, այսօր ճմլում է իմ սիրտը։ Եւ դուք էլ հաղորդակից եղէք այդ ցաւին։ Զասէք, թէ ես ձեր առջև չեմ նկարում մի տաղանդի, մի երկարաթեայ վաստակաւորի պատկերը։ Ես չը գիտեմ, թէ ինչ կը լինէր Նալբանդեանը, եթէ երկար ապրելու բախտ ունենար։ Արդեօք կը յայտնվէր մեր մէջ իբրև մի տաղանդաւոր գրական գործիչ. արդեօք կը տար մեզ մի նշանաւոր գործ։ Չը գիտեմ, ոչ ոք չէ կարող իմանալ այսպիսի բաներ։

Բայց մի բան լաւ գիտեմ ես. որ Վահան Նալբանդեանը պատրաստված, յուսատու աշխատաւոր էր և մի մաքուր, հաստատ, լաւ մարդ։ Կորցնել այդպիսի մարդուն զրկանք է, մեծ զրկանք մանաւանդ մեզ պէս մի ազգի համար։

Ինչու՞ անպատճառ հարցնել՝ պիտի անմահացնէր նա արդեօք իր անունը։ Թող կորչի անունը, բարի գործը չի կորչի...

Իսկ այդպիսի գործ Նալբանդեանի պէս մարդը կը կատարէր մեր մէջ։ Որևէ բարի գործ, որևէ օգուտ հասարակութեան։ Այո, այսքանն էլ բաւական է։

Ուրեմն, յիշենք, ցաւելով յիշենք այս կորուստը...

Լ.

ՄԵՆԱՒՈՐ ԺԱՅՌԸ

—

Անհատների և հասարակութիւնների կեանքի, պատմութեան մէջ երբեմն տեղի են ունենում զուգադիպութիւններ, որոնք ասես գալիս են դիտաւորեալ ձեռով և այլաբանօրէն բնորոշելու հասարակական խոշոր երևոյթներ և բանաստեղծական, խորհրդաւոր փայլ են տալիս մարդկային գործողութիւններին։ Այսպիսի նշանակալից և հազուագիւտ զուգադիպութիւններից մէկն է այն «Մենաւոր ժայռը», որ այսօր բաց ձրանում է մեծ հրապարակախօսի, անմահ Գրիգոր Արծրունու գերեզմանի վրա։

Շիրիմների յաւիտենական համրութեան և խուլ լռութեան մէջ մի խորհրդաւոր լեզու կայ, որ խօսում է տխուր յիշատակարանների տակից։ Նշանաւոր՝ թէ անշուք, զարդարված՝ թէ անզարդ, խնամված՝ թէ անտէր ու մոռացված՝ բոլոր դամբարանները առանց յոյզի, առանց չափազանցութիւնների ու կեղծիքի, մանն ունենալով որպէս գերագոյն, անողոք դատաւոր իրանց ասածների ճշմարտութեան՝ մեղմիւ, փսփսուկով պատմում են աշխարհին անցեալ կեանքերը։ Բայց կայ մի յիշատակարան, մի արձան, մի քար, մի արձանագրութիւն, որ այնքան պերճախօս լինի, այնքան վսեմ ու գեղեցիկ թարգման լինի իր տակ ծածկված լռութեան, որքան այն ժայռը, այն մենաւոր ժայռը։ Զուգադիպութիւնն աքանչելի է. անզուգական հրապարակախօսի դամբարանի վրա այդ մենաւոր ժայռը։ Տարիները կանցնեն տարիների յետևից, փոթորիկներ ու մրրիկներ կը ճայթեն այդ անօրինակ ժայռի կատարին, անձրևն ու ձիւնը փոխ առ փոխ կը թափվեն վերից, բայց հզօր ու անսասան իր տեղում կը մնայ ժայռը անարատ, անաղարտ պահելով այն թանկագին աւանդը, որ անողոք ճակատագիրն է յանձնել նրան։ Ո՞վ կասի, թէ դա Արծրունու կեանքի պատկերը չէ, ո՞վ կասի, թէ այդ մենաւոր ժայռը հազուագիւտ կեանքի համը երգիչը չէ։

Այս մեր արտասուելի օրերում, նիւթապաշտութեան, դաւաճանութեան, բարոյական վաճառքների այս տխուր ժամանակում, երբ գաղափարները դարձել են շուկայի ընթացիկ ապրանք և բարձր սկզբունքները յեղյեղուա են որպէս գարնանային պղտոր ջրերը, երբ մանրացած, գունատ հոգիներում էլ վսեմ հաւատը չը կայ դէպի բարին ու գեղեցիկը՝—այսպիսի յուշարձանը այստեղ մի յուզիչ դաս է։ Մենաւոր ժայռը մի խտացած երազ է կարծես մոռացված այն լաւ օրերից, մի աքանչելի ալեգօրիա այն մարդու կեանքի, որի համար հաւատը դէպի մարդկութեան, իր ժողովրդի, իր հայրենիքի լաւագոյն ապագան անխորտակելի ժայռ եղաւ և որին առաջնորդող պրինցիպները, բարոյական բարձր գաղափարները անդրդուելի հիմունք ծառայեցին իր փառաւոր գործունէութեան։ Մեծ հրապարակախօսի ազնիւ խոհերով հարուստ գլխի վրայով սահեցին և անցան այնքան փոթորկաբեր հողմեր, հազիւ կնճռելով նրա պայծառ ճակատը, իսկ գործը մնաց որպէս կուռ գրանիտ, որպէս անխորտակելի յուշարձան։

Տասն տարի է...

Որքան կարճ ժամանակ, Տէր-Աստուած, և այժմ հնարաւոր է դառնում ասել, թէ Արծրունու նուիրական չիրիմը ծածկող ժայռը մի «խտացած երազ է», մոռացված մեր ողբալի իրականութեան մէջ՝ ով գիտէ որ օրերից։ Մարդարէ էր արդեօք այն խորիմաստ հրապարակախօսը, գալիք վհատեցուցիչ օրերի գուշակ, որ կամեցաւ մահից յետոյ էլ մի զուտ առարկայական, մի չջնջելի պատկեր տալ իր անխախտ հաւատին դէպի տենչալի, լաւագոյն օրերը, դէպի վսեմն ու գեղեցիկը։ Մարդարէ էր, ուրիշ ինչ ասել։ Խանձարուրի մէջ ծերացած մեր խղճալի նոր սերունդը, գաղափարական պայքարի, անձնազոհութեան համար հիւծախտաւոր, հասարակական ինստինկտների ամայութիւնը սրտում կրող, լայկան ու մրմնջացող, սկեպտիկ ու դիտաւորեալ յոռետես, երբ պէտք է արդարութեան մեծ գործի համար զոհաբերութիւն յանձն առնել. գիշատիչ և ամենակարող, ճարպիկ և սարսափելի, երբ պայքարը կատարվում է ոսկէ հորթի շուրջը, այս մեր ցաւի ու բարոյական անկման, այս ամօթալի լքումի օրերում կարիք ունէր ազնիւ կեանքի, անխախտ հաւատի էմբլեմա ներկայացնող այս մենաւոր ժայռին։

Ընդհանուր յուսահատութեան ու թուլամորթութեան մէջ թող բարձր մնայ նա, այն վսեմ յիշատակարանը, փառաւոր իր անզարդութեամբ և գեղեցիկ իր խորհրդով. ով գիտէ գուցէ լքեալներն ու թերահաւատները երբեմն կը գան, կը կանգնեն նրա առաջ գլխակոր, որպէս հրէաները «Արցունքի պատի» տակ, և նրանց չորացած աչքերից էլ մի քանի կաթիլ արցունք կը թափվեն և իրանց մեռած հաւատը կը վերակենդանանայ։

Ա. Ահարոնեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՍԸ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Իմ յիշողութիւններից

(Գրիգոր Արծրունու յիսաւակին)

—

Դեկտեմբերի 19-ին, բոլորվեց առաջադէմ գաղափարների քաջամարտիկ զինուորի, հայ ամենամեծ իդէալիստի ողբալի մահուան տասնամեակը։

Ինձ թւում է, որ երէկ էր այդ, այնքան անջնջելի կերպով դրոշմվել են և դեռ թարմ են յիշողութեանս մէջ այդ չարաբաստիկ օրվան նախընթաց և յաջորդող կսկծալի դէպքերը։

Ես այսօր էլ, տասը տարուց յետոյ, կարծում եմ տեսնել մեր ամենամեծ ուսուցչին, պառկած իր աշխատութեան կաբինէտի թախտի վրա և չը նայելով իր հիւանդութեան, անդադար հարցնելիս «բերեցէ՛ն «Մշակի» սրբագրութիւնը տպարանից, ինչ յօդուածներ կան, ինչ են ասում հեռագիրները, թո՛յլ է տուել ցենզորը այս և այն յօդուածը»։ Նա ապրում, չընչում էր «Մշակ»-ով և միայն մի փափագ, մի իղձ ունէր, որ յաճախ կրկնում էր մեզ, խմբագրութեան անդամներիս—այդ ժամանակ՝ Մարկոսեան, Մալումեան և ես—ասելով «հացնեմ «Մշակի» բաժանորդների թիւը 2000-ի, յանձնեմ «Մշակը» ներկայ խմբին և գնամ մի քանի տարի հանգստանալու Շուէյցարիայում։ Եւ նա իր և իր կնոջ ապրուստի համար Շուէյցարիայում՝ պահանջում էր միայն ամսական հարիւր ռուբլի, այն ևս իբրև վարձատրութիւն իր աշխատակցութեան արտասահմանից։ «Մի քանի տարուց յետոյ, ասում էր նա, ես կը վերադառնամ հանգստացած, թարմ ոյժերով և նորից կը գործեմ ձեզ հետ»։

—«Ա՜խ, երբ կը լինի այն օրը, որ «Մշակը» երեք հազար բաժանորդ ունենա. երևի ես այդ օրը չեմ տեսնի։ «Երեւակայեցէք, երեք հազար հայ ընթերցող, աշխատակիցները ստանում են վարձատրութիւն, ինչ հիանալի պերսպէկտիվ»։

Եւ նա հաւատացած էր, որ մի օր կը լինի այդ, որովհետև ամեն տարի «Մշակի» բաժանորդների թիւը աւելանում էր, թէև դանդաղ, բայց այնու ամենայնիւ զգալի կերպով աւելանում էր։ Այդ էր պատճառը, որ ամեն տարվայ վերջը, երբ բացվում էր բաժանորդագրութիւնը, նա միշտ յուզված դրութեան մէջ էր լինում։ Նա ինքն ամեն օր գնում էր պօստը թղթակցութիւնները և բաժանորդագրները ստանալու. նա գնաց պօստը և դեկտեմբերի 12-ին, շաբաթ օր։ Յաջորդ օրը, դեկտեմբերի 13-ին, կիրակի առաւօտեան, երբ ես մտայ խմբագրատուն, նա նստած էր իր գրասեղանի առաջ, իր բազկաթոռի մէջ և օրվայ լրագիրներն էր կարդում։ Նրա ձեռքը տաք էր։

—Հիւանդ էք, հարցրի ես։

—Մի քիչ ջերմ ունեմ, կարծեմ երէկ պօստում մրսեցի, շատ ցուրտ էր և ես անզգոյշ եղայ։

Բայց դարձեալ նա սկսեց իր հանճարեղ սրախօսութիւնները անել լրագիրների մէջ պատահած յօդուածների մասին և աւելացրեց.

—«Մշակի» բաժանորդագրութիւնը շատ լաւ է գնում. տեսնենք այս եկող 1893 թ-ին քանի՞ բաժանորդ կունենայ։

Ապա նա անցաւ խօսելու նախորդ օրը գրած իր առաջնորդողի մասին, թէ ինչ է կատարել «Մշակը» 1892-ին։

—Այո՛, համարձակ կարող եմ ասել, կրկնեց նա, որ «Մշակը» իր քսան տարվայ գոյութեան ընթացքում 1892 տարվայ նման տենդոտ և յուզալից տարի չէ ունեցել։

Եւ նա անցաւ խօսելու կաթողիկոսական ընտրութիւնների մասին։

—Ցիշում էք, ասում էր ինձ, Օրմանեանի դէպքը։ յիշում էք ինչպէս ամբողջ գիշերը լուսացրինք Ղազարապատում և ստիպեցինք սևագլուխներին զիջել, խոնարհել ազգի կամքի առաջ։

—Դու շատ ես իսօսում, Գրիգոր, ասաց միւս սենեակից տիկինը. քեզ վնաս է, դու տաքացնում ես, պէտք է պառկես։

—Ոչինչ, ես խինին ընդունեցի, այժմ լաւ եմ զգում։

Եւ նա սկսեց այժմ խօսել Լուի Պաստէորի մասին։

—Դուք կարդացէք, որ այս երեքշաբթի, դեկտեմբերի 15-ին, Ֆրանսիան մեծ շուքով տօնելու է Լուի Պաստէորի ծննդեան 70-ամեակը։ Ոչ միայն Ֆրանսիան, այլ ամբողջ լուսաւոր աշխարհը կը մասնակցէ այդ տօնախմբութեան։ Հարկաւոր է, որ «Մշակը» ևս խօսէ նրա մասին։ Գրեցէք, խնդրեմ, մի յօդուած. ես ձեզ կը տամ ֆրանսերէն մի գիրք, որից կարող էք տեղեկութիւններ քաղել։

Եւ անցնելով խմբագրական սենեակը՝ նա բերեց ինձ գիրքը։

Ես խոստացայ բերել յօդուածը երկրորդ օրը, երկուշաբթի, դեկտեմբերի 14-ին։ Երբ այդ օրը, ժամը 1-ին մտայ խմբագրատուն՝ Մալումեանը ինձ յայտնեց. «Գիտես, Արծրունին հիւանդացել է, թոքերի բորբոքումն ունի. բժշկապետ Գասպարեանը այս րոպէիս այստեղ էր. նա ասում է, որ վտանգ չէ նախատեսում»։

—Կարելի՞ է նրան տեսնել, հարցրի ես։

—Ոչ, բժիշկը արգելել է և հանգստութիւն է պատուիրել։

Բայց Արծրունին կողքի սենեակից, իր կաբինետից, որտեղ պառկած էր, լսեց մեր խօսակցութիւնը։

—Պ. Առաքելեանն է, հարցրեց նա։

—Այո, պ. Արծրունի։

—Բերե՞լ էք յօդուածը Պաստէորի մասին։

Եկէք այստեղ կարդանք միասին։

Ես մտայ նրա մօտ. նա հազում էր և ջնջոտութիւնը քիչ ծանր էր։ Տեսնելով իմ տխուր դէմքը, ասաց.

—Ոչինչ, Գասպարեանը գտնում է, որ ոչ մի վտանգ չը կայ. պէտք է միայն 10—15 օր պառկել։ Կարդացէք, խնդրեմ։

Ես կարդացի. նա մի քանի դիտողութիւններ արեց. ես ուղղեցի յօդուածը, և նա յանձնեց Մալումեանին ուղարկելու տպարան։

—Վաղվայ «Մշակի» առաջնորդողը ձերն է լինելու, ասաց նա. մտէք երեկոյեան, սխալները ուղղելու և սրբագրութիւնը տեսնելու։

Նոյն-իսկ հիւանդութեան մէջ նա չէր մոռանում ամենամանր բաները, որոնք «Մշակին» էին վերաբերում։

Յաջորդ օրերը, դեկտեմբերի 15 և 16-ին, հիւանդութիւնը գնում էր իր կանոնաւոր ընթացքով, և բժշկապետ Գասպարեանցը միամբ տացրեց մեզ բոլորիս, որ բարւոքումն է նկատվում և ջնջոտութիւնը լաւանում է և որ նա մեծ յոյս ունի, թէ հիւանդութեան եօթներորդ օրը, երբ պէտք է լինի կրիզիսը՝ բորբոքումը կը մտնի բարւոքման ընթացքի մէջ ու Արծրունին շուտով կառողջանայ։ Սակայն որովհետև հասարակութեան մէջ տարածվել էր Արծրունու հիւանդութեան լուրը և շատ կողմերից հարցմունքներ էին լինում, խմբագրութեան մէջ որոշվեց՝ յայտնել «Մշակի» հինգշաբթի օրվայ, դեկտեմբերի 17-ի, համարի մէջ այդ հիւանդութեան մասին։ Եւ լուրը տրվեց այն ձևով, որ պէտք է հանգստացնէր հասարակութեանը։

Եւ յիրաւի, հիւանդութիւնը յաջորդ օրերում, այն է դեկտեմբերի 17, 18-ին այնքան լաւ ընթացք ստացաւ, և Գասպարեանցը այնքան կանոնաւոր էր գտնում, որ խմբագրութեան մէջ հաւկաւոր համարեցին, հասարակութիւնը բոլորովին հանգստացնելու համար,

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՄԱՀՎԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ

—

Ահա երեք տարի է, որ ես նրան այլ ևս չեմ տեսնում։ Դա մի լղարիկ, բարձրահասակ տղամարդ էր, բաւական տանջված դէմքով։ Լայնեզր հին գլխարկը և պատառոտուն պիդջակը նրան նմանեցնում էին մի հեռու տեղից եկած թափառականի։

Ի՞նչ էր նրա պարապմունքը։ Շաբաթը միերկու անգամ, կռնատակին բռնած հայերէն գրքեր, կը գար մեզ մօտ—Սև-քաղաք, Սպիտակ-քաղաք, կը մտնէր խանութէ խանութ, տնէտուն և իր ապրանքը կը վաճառէր, թէև Սև-քաղաքի և սև մարդիկ շատ էլ լաւ չէին գնահատում նրա ապրանքը։

Մի անգամ, չը գիտեմ լաւ առևտուր էր ունեցել, թէ ինչ է, ուրախ դէմքով մտաւ մեր խանութը և նստեց հանգստանալու։ Ահա այդտեղ նա պատմեց հետևեալը։

«Ես անուանում մի մարդ եմ։ Մի և նոյն այս քաղաքում իմ պարապմունքս սպիտակեղէն վաճառելն էր և միայն դրանով էլ ապրում էի։ Ինչպէս այժմ տեսնում էք գրքեր կռնատակիս, այն ժամանակ էլ կռնատակիս բռնած ունէի չապիկներ և ուրիշ սպիտակեղէն։ Մի տանջող ցանկութիւն, որ պաշարել էր ինձ՝ Գրիգոր Արծրունուն տեսնելն էր, և այդ ցանկութիւնը այնքան ծանրացաւ սրտիս մէջ, որ վերջապէս ուղևորվեցի Թիֆլիս, անձամբ տեսնելու իմ իդէալին։ Բաւական էլ սպիտակեղէն հետս վերցրի, այնտեղ ծախելու մտքով։ Դժբախտաբար խմբագրատունը ինձ յայտնեցին, որ Արծրունին Բօրժօմ ամարանոցն էր գնացել։ Ուղղակի ճանապարհվեցի Բօրժօմ և հարցնելով, նրան մի հիւրանոցում գտայ։ Նա ասաց, որ երեկոյեան իր բնակարանը գնամ։ Մի հասարակ նօմէր էր դա, ուր բացի մի սեղանից և մի քանի նստարաններից, ոչինչ չէր երևում։ Ընթրիք բերին։ Վերջացրինք և միայն այդտեղ յայտնեցի իմ գալուս նպատակը։

Նա շնորհակալ եղաւ և հարցրեց իմ պարապմունքը։ Ես ցոյց տուի սպիտակեղէնը և նա մի փոքր մտաղելուց յետոյ ասաց, որ միւս օրը իր մօտ գնամ։ Մինչև այսօր էլ ինձ համար հանելուկ է մնացել, թէ ինչպէս միւս օրը նա իմ բոլոր սպիտակեղէնը վաճառեց և փողը ինձ տալով ասաց, որ այսուհետև այլ ևս սպիտակեղէն չը ծախեմ և այդ փողով առնեմ հայերէն գրքեր, գնամ մտնեմ գիւղերը, մտնեմ խուլ տեղերը և այդ գրքերը վաճառելով պարապվեմ։

Մինչև այժմ էլ հնչում են իմ ականջին նրա ոգևորված խելացի խօսքերը այդ գործի օգտակարութեան մասին, և ես աշխատում եմ սուրբ պահել նրա այդ աւանդը,—կատարելով իմ պարտքը»։

Ա. Հ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք շարունակում ենք ստանալ հեռագիրներ Էնզէլիից, Լայպցիգից, Եկատերինօդարից, Բագուից, Շուշուց, Երևանից, Ալէքսանդրապօլից, Օդեսայից, Գանձակից, մեր լրագրի հիմնադիր Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակի առիթով։

—

Բագուից մեզ հեռագրում են դեկտեմբերի 19-ին. «Այսօր հասարակութեան խուռն բազմութեան ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ Արծրունու մահվան տասնամեայ տարեդարձին. Ներկայ էր հայոց ամբողջ ինտելիգենցիան և տեղական բոլոր լրագիրների ներկայացուցիչները»։

—

Բագուից մենք ստացանք հետևեալ հեռագիրը. «Խորապէս ողբում ենք մեր թանգագին բարեկամ Վահան Նալբանդեանի վաղաժամ մահը։ Շարբանդեան, Աւ. Իսահակեան»։

—

Բժշկապետ պ. Գասպարեանից ստացանք 25 րուբլի չքաւոր ուսանողների օգտին։

—

Առաջիկայ տօներին չքաւորներին բաժանելու համար ստացանք բժ. Կ. Քոչարեանից 3 րուբլի, մի պարոնից 1 րուբլի։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ թարգմանված է կոմս Լեվ Տօլստոյի «Աստուծուն թէ Մամօնային» գրուածը։

—

Ուրբաթ դեկտեմբերի 21-ին, Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարը ներկայացրեց Թիֆլիսի նահանգապետի հաստատութեանը դումայի վճիռը՝ իշխան Ա. Արղութեանին քաղաքագլուխ ընտրելու վերաբերմամբ։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ դեկտեմբերի 28-ին, Թիֆլիսի նահանգապետի դիւանատան մէջ, երեկոյեան ժամի 8-ին, նշանակված է Ախալքալաքի երկրաշարժից վնասվածներին օգնելու համար կազմված կոմիտէի վերջին նիստը։

—

Ուրբաթ, դեկտեմբերի 20-ին, ռուսաց դրամատիական արտիստների խումբը իր վերատեսուչ Ն. Կրասօվի արտիստական գործունէութեան տասնամեակի տօնխմբութեան օրը ներկայացրեց «Զուարճութեան հետամուտ» դրաման, հեղինակութիւն Բուտտիի. գլխաւոր հերոսի դերը կատարում էր ինքը բէնէֆիցիանտ Կրասօվը։ Թատրոնը գրեթէ լի էր և բէնէֆիցիանտը արժանացաւ օվացիաների ու ստացաւ բազմաթիւ ծաղկէ պսակներ և թանգագին ընծաներ։

—

«Рус. Вѣд.» լրագրում կարդում ենք հետևեալ մանրամասնութիւնները Ի. Ժամհարեանի սպանութեան մասին Մօսկվայում. «Երեկ, դեկտեմբերի 15-ին, ցերեկվայ ժամի 12-ին, երբ հայոց եկեղեցում ժամերգութիւն էր կատարվում, Մօսկվայում բանկային գրասենեակ ունեցողներից մէկի, Ի. Ժամհարեանի վրա յարձակվեց մի բարձրահասակ, թխադէմ, հայկական տիպի տղամարդ և սկսեց դաշոյնի հարուածներ հասցնել նրան։ Մարդասպանը ձերբակալվեց եկեղեցու դռան առաջ՝ եկեղեցական դռնապանի և ծխականների միջոցով, զինաթափ արվեց մօտիկ տեղում կանգնած ոստիկանական զինուորի ձեռքով և ուղարկվեց ոստիկանատուն։ Զինաթափված մարդասպանը անուանեց իրան պարսկահպատակ Միքայէլ Եաղուբեան, 29 տարեկան։ Նրա ասելով, նա եկել էր Վարշավայից Մօսկվա նոյեմբեր ամսի վերջին պաշտօն որոնելու։ Հայոց լրագիրներից իմանալով, որ Ժամհարեանը օգնում է չքաւոր հայերին, նա, հարցնելով անելուց յետոյ, գտաւ Ժամհարեանների պատսաժը, որտեղ տեսաւ Իսահակ Ժամհարեանին զբօսնելիս և դիմեց նրան պաշտօն խնդրելու։ Ժամհարեանը մերժեց նրա խնդիրը այնպիսի ձևով, որ նրան, Միքայէլ Եաղուբեանին, թւաց վիրաւորական։ Այս բանը պատահեց վեց օր առաջ։ Այդ օրվանից մարդասպանը, ոխ պահելով սրտում, վրեժ-ռնց վրէժխնդիր լինել Ժամհարեանից, որ և կատար ածեց, սպասելով Ժամհարեանի՝ եկեղեցի գալուն։ Զարագործը, ինչպէս հաղորդում են, եկեղեցու մօտ եկաւ ցերեկվայ 11 ժամից քիչ անցած, աստիճաններով բարձրացաւ նրա մուտքի սալայատակի վրա, բայց չը մտաւ եկեղեցի, այլ մնաց դուրսը՝ կարծես մի մարդու սպասելով և սկսեց ծխել։ Երբ եկեղեցու գաւթում երևաց Ժամհարեանների կառքը, որի մէջ նստած էին Ժամհարեան եղբայրները, նա շտապով ծխախոտագլանի մնացորդը շպրտեց ձեան մէջ և քաշվեց դէպի գաւթի խորքը։ Եկեղեցու մուտքի սալայատակի վրա առաջինը բարձրացաւ Ի. Ժամհարեան. նրա եղբայրը փոքր ինչ ուշացաւ դուրսը, մուտքի մօտ։ Հէնց որ Ի. Ժամհարեան բացեց մուտքի դուռը, իսկոյն դաշոյնի մի ուժեղ հարուած ստացաւ կրծքին։ Մարդասպանը երկրորդ հարուածը, առաջինից անմիջապէս յետոյ, հասցրեց կողքին, և երբ վիրաւորվածը բնազդմամբ վազեց դէպի դուռը, հասցրեց նորից երեք հարուած պարանոցին և երկու հարուած մէջքին։ Մեռնողը, արնաքամ լինելով, բոլորովին ուժասպառված, ընկաւ սալայատի վրա, և այստեղ միայն նրան օգնութեան հասաւ նրա եղբայրը՝ Ն. Ժամհարեան։ Այդ ժամանակ մարդասպանը շարունակում էր շտապով հարուածներ հասցնել, մինչև որ վերջնականապէս բռնվեց եկեղեցուց Ժամհարեանի աղաղակների վրա դուրս թափած ժողովրդի ձեռքով։ Մարդասպանը պաշտպանվում էր. նա ցոյց տուեց, որ ինքը ֆիզիքական մեծ ոյժի տէր է։ Ի. Ժամհարեան տարվեց եկեղեցու մօտ գտնվող Գասպարեան անկելանոցի շինութիւնը, բայց համարեա իսկոյն վախճանվեց։ Անցքի տեղը իսկոյն եկան Մօսկվայի նահանգական դատարանի պրօկուրօրը, դատաստանական իշխանութիւնները և Մօսկվայի խուզարկու ոստիկանութեան գլխաւորը։ Երկու ժամից յետոյ հանդուցեալի դիակը տեղափոխեցին համալսարանական հիւանդանոցի անդամահատական սենեակը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Տեղիս Լուսաւորիչ եկեղեցում այսօր, դեկտեմբերի 19-ին, Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակի առիթով հոգեհանգիստ կատարվեց։ Չը նայած, որ լի օր էր, Սպիտակ ու Սև քաղաքից և Բալախանիից ժողովվել էր խուռն բազմութիւն՝ պատուելու խաւարի դէմ անդուլ մաքառողի յիշատակը։ Եկեղեցում երգում էր պ. Պոպովի քառաձայն խումբը՝ ձայների անհամաչափ թուով, որովհետև երգիչներից շատերը բացակայ էին, աշակերտ կամ գործակատար լինելու պատճառով։ Սակայն մեզ չափից դուրս զարմացրեց այն, որ սովորական արարողութիւնից զատ, օրվայ պատշաճ մի քանի խօսք ասող չեղաւ ոչ մեր հոգևոր հայրերից և ոչ հասարակութիւնից։ Մեր պատուելի հայրերը, որ ընդունակ են մինչև եօթներորդ երկինք բարձրացնելու «չաղ» ինջեցեաներին, պատանձվեցին մի երկու խօսք ասելու գաղափարի զինուորի մասին, գէթ զեկուցանելու, թէ ում յիշատակին է նուիրված այդ օրը։ Հասարակութիւնը խիստ դժգոհ ու զայրացած ցրվեց»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սարսօնական «Arbeiter Zeitung» հետևեալ նկատողութիւններն է անում կրօնպրինցէսսա Լուիզայի փախուստի մասին. «Հաղորդելով կրօնպրինցէսսայի փախուստի լուրը՝ լրագիրները այն աստիճան խառնել են ճշմարտութիւնը բանաստեղծական սեթևեթների հետ, որ շատ դժուար է իսկութիւնը իմանալ այդ լաբիրինթոսի մէջ։ Ինչպէս մենք կարողացանք իմանալ մի անձից, որ շատ մօտ է պալատին, կրօնպրինցէսսան իրան շատ դժբախտ էր զգում Դրէզդէնում։ Ամենքը, բացի Ալբէրտ թագաւորից, նայում էին նրա վրա, ինչպէս մի enfant terrible-ի վրա։ Թագաւորի հրամանով նա չրջապատված էր պալատական այնպիսի կանանցով, որոնք չափազանց անհաճոյ էին նրան. կրօնպրինցէսսայի իւրաքանչիւր քայլը խիստ վերահսկողութեան տակ էր։ Նա գիրը ուղարկելու ընկերներիս. «մեծ դժբախտութիւն պատեց մեզ. չը կայ այլ ևս մեր մեծ ուսուցիչը»։

Այդ րոպէից անցել է ահա 10 տարի. ամբողջ 10 տարի, մենք, նրա մօտաւոր գործակիցները, գործում ենք նոյն յարկի տակ, ուր մեր մեծ ուսուցիչը փակեց յաւիտեան իր աչքերը և ուր նրա հոգին, սաւառնած, հսկում է մեզ վրա, տեսնելու արդեօք սրբութեամբ ենք պահում նրա աւանդը,—«Մշակը», որի մէջ արտափայլեց նրա ամբողջ հոգին և կորովը։

Բայց դրա պատասխանը թողնենք պատմութեան...

Այո, թողնենք պատմութիւնը. բայց ես չեմ կարող չը վերադառնալ այստեղ մի քանի յիշողութիւնների, որոնց գուցէ էլ առիթ չունենամ վերադառնալու։

Արծրունու թաղումը, այն թաղումը, որ ցոյց տուեց, թէ ժողովուրդը ինչպէս գիտէ գնահատել իր բարերարներին, իր մտաւոր և հոգեւոր ղեկավարներին, մեզ, նրա մօտաւոր աշխատակիցներիս, ցոյց տուեց միևնոյն ժամանակ, թէ ինչպիսի անագին պատասխանատուութիւն է ծանրանում մեր վրա։ Նա թողել էր մի մեծ ժառանգութիւն իր ժողովրդին. սակայն այդ ժառանգութիւնը անարատ, սրբութեամբ պահպանելու, նրան զարգացնելու, ճոխացնելու նուիրական, բայց ծանր պարտականութիւնը դրվում էր նրանց վրա, որոնք, իբրեւ նրա մերձաւոր աշխատակիցներ, կոչված էին շարունակելու նրա գործը։ Անակնկալ կերպով հասել էր ժամը, երբ աշակերտները պէտք է փոխարինէին ուսուցչին։ Սակայն պէտք էր խնարհվել անողոքելի ճակատագրի առաջ. պէտք էր շարունակել «Մշակը», այն «Մշակը», որ ամբողջ քսան տարի հայ ժողովրդի լաւագոյն ձգտումների և իդէալների արտայայտիչն էր հանդիսացել։

Կարող ենք շարունակել—ահա մի հարց, որ անընդհատ տալիս էինք մեզ, մանաւանդ երբ թաղումից յետոյ բազմաթիւ համակրողները հեռացան, գնացին իրանց տեղերը, իրանց գործերին, կրկնելով մեզ, որ «Մշակը» մեր աչքի լոյսի պէս պահենք։ Եւ մենք մնացինք միայնակ՝ որբացած խմբագրութեան մէջ։

Կար սակայն մի խրախուսող հանգամանք. 1889-ին, երբ տօնվեց այնքան փառաւոր կերպով Գ. Արծրունու գրական գործունէութեան քսանհինգամեայ յօբելեանը, մենք, աշխատակիցներս, երեկոյեան, մի ընտանի գումարումի մէջ, խօսում էինք Արծրունու միւս յօբելեանի մասին, երբ կը տօնվի «Մշակի» քսանհինգամեակը։

—Ոչ, պարոններ, ասաց Արծրունին. այն ժամանակ յատուկ իմ, Գ. Արծրունու տօնը չը պէտք է լինի, այլ ձեր ամենքի, «Մշակի» աշխատակիցների տօնը, որոնց թւում և Գրիգոր Արծրունու տօնը։ Եւ դուք պէտք է շարունակէք իմ գործը։

Եւ մեր խումբը առանց մի րոպէ վարանելու, վճռեց նրա մահից յետոյ, շարունակել նրա գործը։

Արդեօք գոհ է մեզանից Գ. Արծրունին, այսօր, երբ հայ ժողովուրդը նրա գերեզմանի վրա մահարձան է կանգնեցնում. գոհ է նա արդեօք այն մահարձանից, որ մենք աշխատակիցներս կանգնեցրինք նրա յիշատակին, մահարձան ոչ քարեղէն, այլ հոգեղէն, այս տասը տարվայ ընթացքում տանելով «Մշակը», նրա աւանդած կոչակը։

Եւ ըստ լատինական առածին, թէ vox populi vox Dei, ձայն բազմաց, ձայն Աստուծոյ, մենք թողնում ենք ժողովրդի դիտակցական ձայնին վճռելու այդ հարցը։

Մենք մեզ յանձնում ենք պատմութեան դատաստանին։

Հ. Առաքելեան

մի ամբողջ շարք ինտրիգների մշտական զոհն էր։ Մինչև անգամ մանր բաներ գնելը նա պէտք է կատարէր իր պալատական կանանց համաձայնութեամբ։ Երբ կրոնպրինցը կորցրեց իր ոտքը և հիւանդ պառկած էր Զալցբուրգում, իր աներոջ մօտ, պալատական կանայք հաղորդեցին Թագաւորին, թէ իբր կրոնպրինցեսան յանախակի զրուցցատրութիւններ է ունենում ֆրանսիական յեղուի ուսուցիչ Ժիրոնի հետ, որ բոլորովին հակառակ է պալատական կարգերին։ Այն ժամանակ վճռվեց անյապաղ աքսորել Ժիրոնին, իսկ կրոնպրինցեսային ենթարկել տնային բանտարկութեան։ Հէնց այս հանգամանքն էր դառնութեան այն վերջին կաթիլը, որ ստիպեց պրինցեսային վճռական քայլ անել։ Կրոնպրինցեսայի ընտանիքը պահանջում է, որ նա վանք մտնի։

—Սկուտարիից հաղորդում են «Paris Nouvelles» լրագրին, թէ տեղական ալբանացիների մէջ սաստիկ վրդովմունք է տիրում, իրանց պարագլուխ՝ յայտնի Իսա Բոլետինացի երկարատև բացակայութեան առիթով, որը մինչև այժմ չէ վերադարձել։ Կ. Պոլսից Բոլետինացի համախոհները կարծում էին, թէ սուլթանը կամենում էր տեսնել իսլամի նշանաւոր պաշտպանին նրա համար, որ անձամբ շնորհակալութիւն յայտնէ նրան և վարձատրէ։ Սակայն այժմ նրանց սրտի մէջ կասկած է ծագել և նրանք սաստիկ անհանգիստ են իրանց պարագլխի վիճակի համար։ Նրանք երկիւղ են կրում, որ չը լինի Իսա Բոլետինաց աքսորվի Փոքր-ասիական քաղաքներից մէկը, ինչպէս աքսորվեց նրանց իշխան Դոդա, մերիդիտների պարագլուխը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

Ցիշողութիւններ, ոգևորող յիշողութիւններ։ Գրիգոր Արծրունու մասին յիշողութիւնները վերակենդանացնում են մեր առաջ գաղափարի մարդուն, որը մեր մէջ ապրեց, մեր մէջ գործեց, որը զգաց իր վրա խաւար և սև ոյժերի հալածանքները՝ բայց միևնոյն ժամանակ տեսաւ և լուսաւոր գաղափարների յաղթանակի արշալոյսը։

Նրա լուսաւոր գործունէութեան առաջ, որ այժմ պատմութեան նիւթ է դարձել, զարդրում է չար զրպարտութիւնը և անհետանում է ստոր բամբասանքը։

Այժմ յարգանք դէպի անձնուէր գործողը, այժմ երախտագիտական զգացմունք դէպի անխոնջ և հարազատ հասարակական մշակը։

—

Դուք ճանաչում էք հրապարակախօսին, բարկութեամբ և արդար ցասումներով լի մարտնչողին, սկզբունքների պատգամախօսին և հասարակական չարիքների մերկացնողին։

Այդ Արծրունու դէմքը լուրջ է, մտախոհ, խորաթափանց, գուցէ և բարկացկոտ։

Բայց ահա մի ուրիշ դէմք։ Նա ժպտուն է, բաց և մեղմ, հաւեմված բաց ծիծաղով կամ թեթև հեգնութեամբ։

Դա էլ նոյն Գրիգոր Արծրունու դէմքն է. բայց այն Արծրունու, որ հասարակութեանը յայտնի էր «Ասիացի» անունով։

—

«Ասիացին» նոյն գործն էր կատարում իր ֆելիետոններով, ինչ որ Գրիգոր Արծրունին իր առաջնորդողներով և ուրիշ յօդուածներով։

Զեր ուրիշ է, բայց էութիւնը նոյնը։

Ասիացին դիտում էր կեանքը և նրա մէջ գործողներին, նկատում էր այդ կեանքի և գործողների կենցաղավարական բ՛ոորոշ գծերը, նրանց գործունէութեան առանձնայատկութիւնները, լուսաւոր երևոյթները, անհեթեթութիւնները, անցքերի զուգադիպութիւնները և թիւրիմացութիւնների անվերջ կուտակումները։

Դիտելով և նկատելով այդ բոլորը՝ նա տալիս էր մի շարք ֆելիետոններ, որոնց մէջ թեթև պատմուածքի ձևի տակ, ծիծաղի, կատակի, սրախօսութեան և զուարճախօսութեան կոհակների մէջ նա ներկայացնում էր մեր կեանքը և գործողներին։ Ֆելիետոնները ագահութեամբ կարդացվում էին, տպաւորութիւն էին գործում և լրացնում էին այն, ինչ որ թերի էր մնացել միւս յօդուածներում։

—

Ասիացու ծիծաղը և սրախօսութիւնը անպատակ մի ծիծաղ և սրախօսութիւն չէին։ Դա ծաղր չէր ծաղրի համար, միայն ընթերցողներ գրաւելու համար, միայն ծափահարութիւններ որսալու համար։

Դա նոյն լուրջ մարդու և հասարակական գործողի մտքերի գործնական արտայայտութեան մի նոր ձիւղաւորութիւնն էր։

Այսօր, երբ մենք կանգնած ենք Գրիգոր Արծրունու մահվան տասնամեակի առաջ և յիշում ենք նրա բեղմնաւոր գործունէութիւնը իր բոլոր առանձնայատկութիւններով, թող և ներկայ «Մանրանկարը» նուիրված լինի Ասիացու յիշատակին։

Վրթին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 դեկտեմբերի

ԴԷԼԻ։ Ներկայութեամբ 15,000 մարդկանց տեղի ունեցաւ թագադրութեան մասին յայտարարման հանդէսը։ Փոխարքան ասեց, որ դուրպարում գտնվում են մարդկային ցեղի հարիւրեակ հինգերորդ մասի ներկայացուցիչները, և նրանք բոլորն էլ գլուխ են խոնարհեցնում մէկ գահի առջև։ Կարդացվեց արքայական հրովարտակը, որի մէջ յայտնված է բարեհաճութիւն հնդկաստանին ու շնորհակալութիւն հնդկական զօրքերին, և աւետվում է Ուէլսի իշխանի և իշխանուհու մօտալուտ գալուստը։ Հնդկական վասալ հպատակները անարգել կը վայելեն իրաւունքներ։ Երեք տարի շարունակ կառավարութիւնը չի առնի տոկոսներ սովից վնասված տեղական պետութիւններին տրված փոխատուութիւններից։

ՊԷԿԻՆ։ Կէտտէլերի արձանը կը բացվի յունվարի 5-ին։ Դեսպանները խորհրդակցեցին պատերազմական տուգանքը ոսկով պահանջող յայտագրի մասին։ Ամերիկական քաղաքականութիւնը, որ պաշտպանում է Չինաստանի պատճառաբանութիւնները՝ խոչընդոտ է հանդիսանում նոյնմանման յայտագիր ներկայացնելուն և թոյլ է տալիս Չինաստանին յուսալ, որ գործը կը ձգձգվի անորոշ ժամանակով։

ՊԱՐԻԶ։ Դէլկասսէ հիւանդ է ինֆլուէնցայով։

ՆԻԻ-ԵՕՐԿ։ Վէնէցուէլական ապստամբները յաղթութիւն տարան։ Կառավարչական զօրքերը կորցրին 300 մարդ։

ՊԱՐԻԶ։ Լուր է պատում, որ կառավարութիւնը, Մարոկկոում տեղի ունեցող դէպքերի պատճառով, մեծացրեց բերդապահ զօրքը Ալժիրօ-մարոկկեան սահմանի վրա։

ՎԱՐՇԱՎԱ։ Վարշավայի վրայով անցաւ դէպի Պետերբուրգ կոմս Լամզդորֆ։

ՍՕՖԻԱ։ Բոլգարիան հրաժարվեց առևտրական դաշնագրից Աւստրօ-Ունգարիայի հետ։

ՎԻԵՆՆԱ։ Լամզդորֆ 1 ժամ 20 րոպէին ընդունվեց հրաժեշտի ունկնդրութեան կայսրի մօտ, որ տևեց 20 րոպէ։

ՎԻԵՆՆԱ։ «Fremdenblatt» լրագրի խօսքով, Լամզդորֆի անձնաւորութիւնը կայսրի վրա բարենպաստ տպաւորութիւն թողեց։ Արտաքին գործերի մինիստրութիւնների բանակցութիւնները բարեյաջող են։ Առաւօտեան ֆլիգէլ-ադիւտանտ Դիտրիխ յանձնեց Լամզդորֆին կայսրի ընծան, որ բաղկացած էր պատկերից։

ՍՕՖԻԱ։ Անկախ լրագիրները, որոնց թւում և Ստամբուլովեան «Новый Вѣкъ», գոհունակութիւն են յայտնում Լամզդորֆի դալստեան առիթով։ Խոստովանվում է, որ այդ դալուստը վկայում է, թէ Ռուսաստանը լուրջ դիտաւորութիւններ ունի նպաստելու դրութեան բարւոքմանը Մակեդոնիայում։ Բոլգարական ժողովուրդը կարող է յոյս դնել պետութիւնների հոգածութեան վրա և սպասել ապագայ անցքերին։ «Болгарія» լրագիրը վաղաժամ է համարում լայն եզրակացութիւնները Լամզդորֆի ճանապարհորդութեան առիթով, որը վկայում է Կայսրի քուռն հաւակրութիւնը։ Լրագիրները հաստատում են, որ Լամզդորֆ դրաւեց հասարակութեան համակրութիւնը, և սպասում են արևելեան կամ մակեդոնական հարցի անյապաղ լուծման։ Բոլորը սպասում են նրա բարերար լուծման։ Կառավարութիւնը յայտնեց ազգային ժողովին և կը հաղորդէ պետութիւնների ներկայացուցիչներին առևտրական դաշնագիրներից հրաժարվելու դիտաւորութեան մասին. նա յոյս ունի բանակցութիւններ սկսել և շահաւէտ դաշնագիրներ կապել։

ՎԻՆՆԷԱ։ 9 ժամ 5 րոպէին Լամզդորֆ ճանապարհ ընկաւ։ Նրան ճանապարհ էին գցում կոմս Կալնիսկ, ռուսաց դեսպանութեան անդամները, ռուսաց ընդհանուր հիւպատոսը, փոխ-հիւպատոսը, արտաքին գործերի մինիստր Գոլուխովսկի, դեսպան Զիւդէնհօրստ, դեսպանութեան խորհրդական Կինսկի և բոլգարական դիպլոմատիական գործակալութեան քարտուղարը։—Լամզդորֆի մօտ նախաճաշին ներկայ էին արտաքին գործերի մինիստր Գոլուխովսկի, դեսպան Կալնիսկ և դեսպանութեան անդամները տիկինների հետ։—Լամզդորֆ գնաց կայսրի մօտ հրաժեշտի ունկնդրութեան։

Կ. ՊՕԼԻՍ։ Բրէսովում երեկոյ բոլգարական հրոսակախումբ Եօրդան Պիպէնկօի հրամանատարութեամբ։ Գիշերը տեղի ունեցաւ ընդհարում 70 զինուորների և ժանդարմների հետ, պօրուչիկը վիրաւորված է. 15 զինուորներ սպանված են և վիրաւորված, հրոսակախմբի երկու անդամներ սպանվեցին, մնացածները հեռացան։ Բրէսովի բնակիչները մասնակցում էին պատերազմին։

21 դեկտեմբերի

ԱՍԽԱԲԱԴ։ Անդիժան հասաւ Կարմիր Խաչի կազմակերպած խումբը։ Լաւ եղանակը բաւական թեթևացրեց թշուառութիւնը, այն-ինչ վերահաս ցրտերը անելանելի դրութեան մէջ էին դրել տեղական աղգաբնակութիւնը։ Հանում են նուէրատուութիւններ։ Հարկաւոր է փող, մանաւանդ տաք զգեստ և վառելիք։ Զինուորական նահանգապետը դեկտեմբերի 19-ին նորից եկաւ Անդիժան։

ՕԴԵՍԱ։ Հաբէշստանի պատգամաւորութիւնը, մինիստր Լիչինի հետ՝ մեկնեցան։

ՏԱՆԺԷՐ։ Թեկնածուն բանակ է դրել։ Նա չը կարողացաւ դրաւել հարևան ցեղերին։ Ապըստամբները Ֆէցի վրա չը յարձակվեցին։ Քաղաքը հանգիստ է։ Մթերքները թանկացան։

ՄԱԴՐԻԴ։ «Ինֆանտա Իզաբելլա» յածանաւը հասաւ Տանժէր։ Յածանաւի հրամանատարը ապտիական դեսպանին յանձնեց կառավարութեան հրահանգները։ Տանժէրի նահանգապետը կաբինէտի պարագլուխներին յայտնեց, որ նրանք պատասխանատու են իրանց գաւառում գտնվող ճանապարհների ապահովութեան համար։ Տանժէրից հաղորդում են, թէ սուլթանի եղբայրը Մօլլա Մօհամէդ, որ կալանաւորված էր, սուլթանի հրամանով արձակվեց կապանքից և նորից աստիճան ստացաւ։ Ուրիշ տեղեկութիւններին նայելով՝ թեկնածուն յայտարարել է, թէ ինքը Մարոկկոի գահին տիրանալու նպատակով չէ կռուում։

ԼՕՆԴՕՆ։ Կառավարութիւնը Մելենիքին բացատրեց միարան գործունէութեան օգուտը՝ մօլլային չրջապատելու համար։ Ասում են թէ Նէգուսը դեռ չէ ընդունել առաջարկութիւնը, բայց անչուշտ կը համաձայնի։ Սպասում են, որ անգլիական սպաները Բաս-Մակոնէնի հետ կը հանդիպեն Խարրարում, որտեղից հաբէշ զօրքերը արշաւանքը կը սկսեն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆՎՈՒՄ Է ՌՈՒՍԵՐԷՆԻՑ

ՍԱՌՈՒՑՆԵՐԻ ՄԷՋ

ՖՐԻՏԻՕՖ ՆԱՆՍԷՆԻ

1—2 Ա. Յովհաննիսեան

Տօներին երեխաներին ընծայելու համար, լոյս տեսան ԷՄՄԱՆՈՒԷԼ քահանայի

ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԸ

(15 պատկերով, 72 երես)

Առանց կազմի—50 կ., գումարով 40 կ., կազմով—75 կ., գումարով 60 կ.։

МОСКВА, свящ. Э. Назарьянцъ.
ТИФЛИСЪ, Центральная книжная торговля. Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։ 2—6

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, դեկտեմբերի 24-ին, նշանակված է երկրորդ ընդհանուր ժողով՝ կանդիդատներին քուէարկելու և տնտեսական եւ այլ հարցեր քննելու համար։ 3—3

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԽԵՂՃԵՐՔ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Գինն է 1 րուբլի

Ճանապարհածախսով 1 ր. 20 կոպէկ։

Դիմել հեղինակին. Тифлисъ, редакція „Мурчъ“ եւ Գուտենբէրգ գրավաճառանոցը։ 7—10

ՓՈՂՈՑՆԵՐ «DECADENCE» ծախվում են միայն

ՕՐ. ՕՔՈՅԵԱՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

(Պուշկինսկի պասաժ), իսկ պարահանդէսի օրը Ժողովարանում։ 2—3

Լոյս տեսաւ

Զաք. Գրիգորեանցի (Կովկաս. գրավաճառանոցի) հրատարակութեամբ՝

ԾԵՐԵՆՑԻ

ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ

Գինն է (առաջ 1 րուբլի) այժմ 50 կոպ.

Նոյն տեղը վաճառվում են նոյն հեղինակի՝

ԵՐԿՈՒՆԴԻ 9-Դ ԴԱՐՈՒ

Գինն է 1 րուբլի

ԹԷՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆԻ

Գինն է 1 րուբլի

Գումարով գնողներին 20% զեղչ

Շուտով մալուլին կը յանձնվի 2-դ բարեփոխված տպագրութեամբ՝ Զաք. Գրիգորեանցի յօրինած «ՄԱՐԴԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ» կամ մարդուս մարմնի կազմախօսութեան և բնախօսութեան ձեռնարկը, բազմաթիւ պատկերներով. 2—3

Լոյս տեսան և վաճառվում են

1903 թ. Մ. ՀՄՇԿԵԱՆԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Հասցէն. Թիֆլիս, Մակար Զմիկեան։ 9—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՄԵՂՐ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆԻ, ՄԵՂՈՒԱՆՈՑԻՑ.

Ֆունտը—40 կոպ. պուդը—14 րուբլի

Կանոնիրսկի պերեուլոկ, տուն Զիլոֆի, № 2 (Բազդոնի պաստի ետեւում), Առ. ժ. 10—1. երեկ, ժ. 5—7։

ՆՈՒԽՈՒ երկու եկեղեցիները միասին՝ կարևորութիւն ունեն մի շնորհուսակ խմբապետի մինչև 600 ր. ռոճկով. կարող ցանկացողներից խնդրւում է դիմել վիճակիս տէր-փոխանորդ Սիօն վարդապետին։ 3—5

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ԼԷՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Առաջին հատոր

(477+VIII երես, 14 պատկերով)

Ամբողջ գործը, որ գրական-կենսագրական մի մանրամասն տեսութիւն է, բաղկացած կը լինի ԵՐԵՔ հատորից, իւրաքանչիւրը մօտ 500 երես, զարդարված ԲԱԶՄԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ (կը լինեն «Մշակի» աչքի ընկնող աշխատակիցների պատկերները)։

Առաջին հատորը բաղկացած է երկու մասից. I) Արծրունիների տոհմը. II) Գրիգոր Արծրունու ուսանողական տարիները (գրական գործունէութիւն մինչև «Մշակը»)։ Երկրորդ հատորը մամուլի տակ է։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժանորդագրվում է երեք հատորի համար ԵՐԵՔ ՐՈՒԲԼԻ, ճանապարհածախսով ՉՈՐՍ ՐՈՒԲԼԻ։ Կարելի է վճարել և մաս-մաս, այն է 2 ռուբլի բաժանորդ գրվելիս, իսկ մնացածը՝ երկրորդ հատորը լոյս տեսնելուց յետոյ։

Նրանք, որոնք կամենում են ունենալ գրքերը կազմերի մէջ, վճարում են ՄԻ ՐՈՒԲԼԻ երեք կազմի համար։ Դրսի քաղաքներից կազմած օրինակներին բաժանորդ գրվողները պէտք է աւելացնեն ճանապարհածախս 20 կոպէկ՝ պօստային փաթեթի համար։

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի։ Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յետոյ, գինը կը բարձրացնվի։ Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը և 2) «Գուտենբէրգ» գրավաճառանոցում, Լօրիս-Մէլիքեան փողոց։

Օտար քաղաքացիները դիմում են. Тифлисъ, Редакція «Мшакъ»։

ԲԱԳԻՈՒՄ բաժանորդ կարելի է գրվել պ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեանի մօտ, Ա. Ծատուրովի գրաֆենեակում։

Ա. Փրիդօնեան եւ Ըկ. Բանկային Գրասենեակը

Ներքին փոխառութեան վիճակախաղի I կարգի տոմսերը ապահովացնելու համար վերցնում է 4 ռուբ. 90 կոպ. ամեն մէկ տոմսից

ՅՈՒՆՎԱՐԻ 2-Ի ՏԻՐԱԺԻՑ 1903 ԹԻՒ

Բացի մարկան ամեն մէկ անդորրագրի համար։ Ապահովացումն հեռադրով և վերադիր վճարով չէ ընդունում։ 3—5

Дозволено Цензурою, Тифлисъ, 21 Декабря 1902 г.

Электропечная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.